

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱՂԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN MONTHLY JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 341 West, 23st St., New York, N. Y. Vol. VI, 1896

ԲՈՎԼՆԵԴԵԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական ընթերցում.— Հայ Յեղափոխականները.— Ժիւլ Միսոն.— Կրեմլի աստամբուլները.— Նամակ Կ.Պոլսէ.— Նամակ Թուրքիայէ.— Ամերիկայի Հայոց խումբի մասին թիւերը:

ԽՄԻՆԳՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Քաջալերական լուրերն իրարու կը յաջորդեն այս միջոցին:

Սուլթան Համիտի վեհափառ ողնաչարն ուռով մը արտաւերեր է: Արդէն նորին փառաշահութիւնը կը տառապէր ուռուցիկ գլխէն, ինչպէս ամեն ոք գիտէ:

Կրեմլի աստամբուլները չե՛ւ զրուած՝ Դուռն կը գտնէ իւր առջեւ Տրիւգնին կամ Տիւրքիներն սաքի ելած: Ըստ Հեռագրին, (Յունիս 20), Տիւրքիներն թրքական շորս զօրախմբեր սրէ անցուցեր են և թնդանթներ յափշտակած: Տասներկու վաշտ զօրք թեսաղոնիկէէն ի Սիւրիա երթալու հրաման ստացած են:

Դիւցազն Զէյթուն, որ Թրքի ոյժերն խայտառակող առաջին զօրութիւնն եղաւ,

վերջապէս ստացեր է, ըստ վերջին հեռագրին, իւր հաշտութեան պայմաններուն մին, և Բրիտանեայ մը կառավարիչ կարգուած է քաջաց գաւառին համար:

Յիշենք Հռովմէական Հայոց Պատրիարք Ար. Աղարեանի դիմադարձութիւնն Բ. Դրան և աջակցութիւնն մեր անվեհեր Պատրիարք Հօր հետ ի հռչակել Թուրք կառավարութեան դժոխականութիւնն:

Ֆռանայի մէջ կաթուղիներն, ի գլուխ իրենց ունենալով գէշայր Շառմթան, կը շարունակեն ի նպաստ Հայաստանի հանգանակութիւնը: Հանգանակութիւն անել սկսած են նաև Գերմանիոյ բողոքական երիցունք վառն Հայ տառապելոց:

Նիւ Եորքի Հայ մը վերջերս տեսակցեցաւ Ամերիկայի կաթուղիներու երկու մեծագոյն եկեղեցականաց հետ, որք խոստացան ամառուան ցրօնքէն յետոյ նախաձեռնութիւն յանձն առնուլ հանգանակութիւն անելու ի նպաստ Հայկական դրամագլխոց:

Ամերիկայի Հանրապետականք, որք չուտով իշխանութեան պիտի անցնին, հռչակեցին պաշտօնապէս թէ իրենց խնդիրներուն մին ալ Հայկական պիտի լինի:

Բարիզի մէջ, Գիտական Ընկերութեանց Հիւրանոցում, Յունիս 9ին, Հայաստանի վրայ բանախօսութիւն մ'է արեր Տ. Անաթօլ Լըռուա-Պօլիէօ, և յայտարարեր է

թէ Եւրոպայի ամենասուրբազան պարտաւորութիւնն է միջամտել ի թեր Հայոց 500 հոգիք ներկայ գտնուած են, ի միջի որոց Նուպար Փաշա և Հայր Շառմիսան:

Տիար Մ. Մ. Մանկատարեան FORUM ամսաթերթի Յունիս թուոյն մէջ յօդուած մ'ունի «Հայաստանի մօտաւրտ կորուստը մեր պարտականութիւնը» խորագրով:

«Ինչո՞ւ, կը հարցնէ յօդուածագիրը, Եւրոպա կը վարանի դադրեցնել արիւն-հեղութիւնը, վերջ տալ թրքական խեղճարութեան անէծքին յԱսիա: Անտարակոյս ռուսական յարձակման ժառանգական վախը տակաւին Եւրոպիոյ անուրջն է: Նաբոլիոնի կարծիքն էր թէ առանց թրքական կառավարութեան մ'ի Կ. Պոլիս, Ռուսիա պիտի արշաւէր Եւրոպա և Ասիա, և խաղախք, հանելով Եւրոպիոյ Մաքսօններն ու կեդտերը իրենց տեղէն, պիտի դառնային աշխարհի տէրերը: ... Բայց աշխարհ փոխուած է Նաբոլիոնի օրերէն ի վեր, և այսօր անկարելի է ու հցէ Տէրութեան արշաւել ամբողջ աշխարհս: Ոչ ոք աւելի յարմար էր քան զՆաբոլէոն արդի կետար մը դառնալու, և ոչ մի երկիր աւելի քան զՖրանսոս ժողովրդական էր ներկայ դարուս սկիզբները: Սակայն և այնպէս Նաբոլէոն ճմլուեցաւ ի Ուաթէրլու և Ֆրանսոս Հանրապետութիւն մ'է այսօր:

Կը վախեմ թէ Թուրքիոյ նկատմամբ Եւրոպիոյ համակրութեան գաղտնիքը վաճառականային է: Անգլիա և Գերմանիա կը շինեն այն աւաթակաները որք կը վաճառուին Կ. Պոլսոյ մէջ: Թուրքիա ոչ ինչ կը գործէ, ոչ ինչ կը կերտէ, ոչ ինչ կը պեղէ հողէն, նա պարտի ներածել ամեն ինչ: ... Վասն որոյ, թող կը արուի Թուրքիոյ կառավարել, ի պատճառս ոչ միայն տէրութեանց քաղաքական նախանձընդդիմութեանցը, այլ և շնորհիւ Եւրոպիոյ վաճառապաշտութեանը:»

Ապա յօդուածագիրը կը յայտարարէ թէ «Անգլիա աշխարհիս բարոյական ազգն է գերազանցապէս» և կ'ասէ թէ «Հայք անյուսալի կերպով դատապարտուած են եթէ անգլիախօս ժողովուրդք չփութան նոցա օգնելու:»

Այս յօդուած աւելի ընտիր պիտի լի-

նէր եթէ տեղ տեղ հեղինակը յիշէր թէ «Լուսթիւնը սսկի է:» Ահաւաստիկ օրինակներ:—

«Պէտք է ընդունիլ, կ'ասէ, թէ յեղափոխական կոսսակցութիւն մը կայ Հայոց մէջ, որուն կը պատկանին առք գըլուխ երիտասարդներէն ոմանք որք անտարակոյս դիմած են թունդ միհիլիզմի (սչնչականութեան) մօտեցող յուսահատական միջոցներու, այն յուսով որ մեծ ահաբեկութիւնը բռնադատուին գալ իրենց օգնութեան:»

«Հայաստան, որ այժմ աւելի չէ քան աշխարհագրական բացատրութիւն մը:»

«Չեմ կրնար խիտ լինիլ դէպ անոնք (Հայերը) որոց համբերութիւնը հասած լինելով ընդ կարիճ մտրակաւ բռնաւորին որոյ ցանկութիւնը յազեցուցնել ստիպուած են տալով իրենց ինչքը ու իրենց դստերքը, սկսած են իրենց հարստահարիչներու օրինակին հետեւիլ կողոպտելով և ուլաններով:»

«Երկուքն ալ (Թուրքք և Հայք) ունին իրենց լեցուն բաժինը արեւելեան ցեղերու առաքինութեանց և մոլութեանց:»

Կը վախենք թէ այս խօսքէն այնպէս հասկնան օտարակաիք թէ Հայք բարոյականով հաւասար են Թրքաց:

Հեղինակին անաշառ լինելու փափաքը զովելի է, բայց չեմ կարծեր թէ թիւրիմացութեանց տեղի չտալու բաւական զգուշութեամբ գրած է իւր յօդուած:

«Լ'Առմէնի-Արմէնիա»ի Յունիսի թուոյն մէջ կը կարդանք սա զարմանալի տողերը:—

«Մեր հայ ընթերցողաց կը յանձնարարենք» կ'ասէ երկլեզուեան թերթը, «զմեր քաջ եղբայրակից Արմէնիան Մարտիկոյ, որ (ոչ եղբայրակիցը այլ թերթը՝ անչուշտ) կը հրատարակուի շաբաթը երկու անգամ ահա գրեթէ տասներկու տարիէ ի վեր: Պրն. Մկրտիչ Փորթուքալեան քարոզած է, ինչպէս մենք, սպասել արեւելեան խնդրոյն վերաբացումին: Եթէ մեր հայրենակիցներ խուլ մնացած չլինէին մեր ձայնին, ներկայ ազէտէն խուսափած պիտի լինէին:»

Տիար Չերազի այս միամիտ խօսքերէն կրնայ Թուրք կառավարութիւնն եղ-

րակացնել այն տգեղ խոստովանութիւնը զոր ի զուր ջանաց երկաթեայ Պատրիարքէն Հանել— թէ Հայերն եղան պատճառ. կոտորածներուն: Նախ, ամենեւին չենք ընդունիր թէ կոտորածոց պատճառը Հայք եղած են, երկրորդ, չենք հասկնար թէ ինչպէս կրնայ «գիւանագէտ» մը այսպիսի խոստովանութիւն մ'անել անգլիերէն և ֆրանսերէն հրատարակուող թերթին մէջ՝ մինչև անգամ եթէ ինքն այդ յոյժ վիճելի կարծիքը գոթաղբաբար ունենար: Սխալիլը մարդկային է . . . :

* *

Կ. Պոլսէն Յունիո 23 թուականով հեռագիր մը հրատարակուեցաւ Նիւ Եորքի մէջ որ մասնաւոր ուշադրութեան արժանի է ոճովն ու ոգովն:—

«Ի հեճուկս ամէն նեղութեանց որոյ մէջ բռնուած են թուրքք, կ'աւել խորիմաստ հեռագիրն, նոքա կը շարունակեն ամենամեծ հաճոյակատարութիւնն ցուցնել Օրիորդ Բլարա Պարթընի և իւր օգնականաց: Մինչ միւս նպատամատոյց գործակալութիւնք ամեն տեսակ գոռարութեանց նշաւակ են, Օր. Պարթընի գործիչք մասնաւոր շնորհք կը գտնեն և ամենափոքրը խոչընդոտի իսկ չեն հանդիպիր:»

Վասնզաւոր տեղերը կարմիր խաչի գործիչք ամենաջերմ խնամով կը պաշտպանուին: Օր. Բ. Պարթըն խնդալից է գործոց այս կացութեան վրայ և իրենց ցուցուած շնորհքներն կը վերագրէ մեծապէս իւր ներկայացուելուն առ Բ. Գուռն ի ձեռն դեսպան թէոֆիլի, որով առթիւ Օրիորդն ծանոյց թէ իւր առաքելութիւնը առանց դաւանանքի կամ կրօնքի էր, և էր լոկ մարդասիրական, և յայտարարեց թէ կարմիր խաչի գործիչները չպիտի երես դարձնէին տառապեալ թրքէն՝ վասն նպատեւելու տառապեալ Բրիտանիէին:»

Այս հեռագրին վրայ գիտողութիւն կայ անելու:

Անհաճոյ է տեսնել թէ Օր. Պարթըն կը կրկնէ այս առթիւ իւր խոստումը առ Գուռն և գնոյն կը ծանուցանէ Ամերիկացոյ՝ թէ թրքաց մէջէն տառապողներուն ալ օգնելու պաշտօն ունի ինքը:

Միթէ այն միլիոնաւոր գումարները, դրամ թէ վաճառք թէ կահ կարասի, զորս թրքերն անամօթաբար յափշտակե-

ցին Հայ Ազգէն և զայն ամենաչքաւոր ժողովուրդ մ'արին, բաւական չե՞ն որ տակաւին Օր. Պարթըն ալ քրիստոնէական ողորմութեան նուիրական քաղը ուզէ բանալ գողերուն և աւագակներուն առջեւ՝ անոնց ալ անխտիր օգնած լինելու խորհրդով: Այդպիսի սխալ մը անսպասելի է Օր. Պարթընի նման խելացի կնիկէ մը:

* *

Վանի մէջ ալ վերջապէս ջարդուած են Հայերը, թուով 1,500, եթէ ճիշդ է հեռագիրն: Այս ջարդի պատասխանատուութիւնն Ռուսիոյ վրայ կը ծանրանայ յաւէտ, զի, որպէս կ'ըստս յայտարարեց ամիսներ առաջ, Ռուսիա լինելով թուրքիոյ պաշտպանը կոտորածներու սկիզբէն ի վեր կամ գոնէ Տէրութեանց միջամտելուն դէմ յայտնապէս առարկելէն ի վեր, նա կը լինի բնականապէս իրաց այս ողբալի վիճակին և նոր կոտորածներուն բուն պատասխանատուն:

Ռուսի խաւարամիտ տեսակետէն ինչ մեծ յառաջդիմութիւն կ'անէ համապաւականութեան դատը թուրքիոյ մէջ—Հայ, թուրք, Տիւրքի, Գուրդ ևն. կը ջարդեն զիրար, և Սուլթանը կ'աքսորէ, կը բանտարկէ, կը ջնջէ թէ Հայ և թէ թուրք ինտէլիգէնտը: Գետինը կը պատրաստուի որ բուն ռուսերը դաղթեն նոր պատերազմէն յետոյ ի թուրքիա, և զայն անեն ճշմարիտ Ռուսաստան քիչ առեկէն: Սուլթանը չըզիտէ դեռ թէ Ռուսին գործը կը գործէ իւր երկիրը արագապէս կործանելով:

* *

Խմբագրութեանս երբեմն յանկարծ գիրք կամ պատկերներ կը յղեն ոմանք՝ խնդրելով որ վաճառենք: Մեք յանձն առած ենք Հայոց քաղաքական մէկ լրագրի խմբագիր և տնօրէն լինիլ— այսինքն գոռարութիւններու դէմ մաքառիլ, նախատինք կրել, խժեթանաց հանդուրժել, սպառնալիք լսել, անձնական թշնամիներ չատցնել, նիւթական փնտնելու տանիլ, բայց պատկերներ կամ գրքեր վաճառելու յանձնառութիւն չենք արած և դեռ մտադիր չենք զայդ անել:

«ՀԱՅՔ»Ի ԽՄԲԱԳՈՒՏՈՒՆԸ

ԱՅԺՄ ԿԸ ԳՏՆՈՒԻ Ի ԹԻԻ

341 Ուէսթ, 23դ. Փողոց

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Կ. Պոլիս, Յունիս 16. Այսօր իրատէ մ'ելաւ որով քրիստոնէայ կառավարիչ մը կը կարգուի Զէյթունի համար:

Լոնտոն, Յունիս 16. Հայախնամ Յանձնախումբն ծանոյց անցեալ օր Տիար Կլատտոնի թէ Փրոֆէսօր Պիլիթ պատուիրակ նշանակուած էր երթալ ի Միացեալ Նահանգս Ամերիկոյ ի ջատագովել զՀայկական դատը: Տ. Կլատտոն՝ պատասխանին մէջ կ'աւել. «Սրովհետեւ ձեր պատուիրակը ամենազօրաւոր դատը որ երբէք եղած է պիտի դնէ ամենառատ ազգի մը առջեւ, մեծ արդիւնքներ կը յուսամ»:

Աթէնք, Յունիս 18. Թուրք զօրքերը կողոպտեր են Կրեսէի Պօնիդա գիւղը, քայքայեր են չորս եկեղեցի, կոխտներ են խաչերուն և պատկերաց վրայ, բացեր են գերեզմաններն ու մեռելոց ոսկորներն ցրուեր են:

Բրիտանական հիւպատոսը կը վկայէ վերոյիշեալի ճշմարտութեան:

ԿՈՏՈՐԱՅ Ի ՎԱՆ

Յունիս 24ին պոլսեան հեռագիր մը կը գրէ թէ ամսոյն 22ին, երկուշաբթի օրն, ցոյց մը տեղի ունեցեր է յորում 400 Հայեր սպաննուած են. խռովութիւնը նորոգուած է հետեւեալ օրն ևս: Բազմաթիւ անձինք ապաստանած են բրիտանական հիւպատոսարանում:

Ջարդը կ'ընծայուի Դրան գործիչներուն, որք վճարուած էին ցոյց մը գրգռելու համար Հայոց կողմէն որ կարենար իբր պատրուակ ծառայել ընդհանուր կոտորած մը մատակարարելու քրիստոնէից:

Կ. Պոլսէն կը հեռագրեն Լոնտոնի Բրոնիքլին թէ Հայոց կորուստը վերջին ժխորմանց մէջ ի վան կը հաշուի 1,500 մարդ սպաննուած, Մինչ Թրքաց կորուստն էր 200: Հեռագիրն կը յաւելու թէ Բուրդք ամենուստ կը ժողովին ի կողոպտել զՎան:

(Վանի այս դէպքերուն նկատմամբ ճշգրտագոյն տեղեկութեանց պէտք կայ):

Սասունէն լուր եկած է թէ հոն խռովութիւն մը տեղի ունեցեր է անցեալ շաբաթ ընդ մէջ Յոսեանց և Թրքաց որով 10

Յոյն սպաննուած են:

(Այս հեռագրի մէջ յիշուած Սասուն բառն պէտք է Սամսուն լինի: ԽՄԲ. ՀԱՅՔի):

Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ Սուլթանի օգոստոսիառ նախագահութեան ներքեւ գործող Յանձնախումբը որ ի նպատակ Հայաստանի նեղեալներուն հանգանակութիւն անելու պաշտօն ունէր, հաւաքած է իբր 42 (քառասուն երկու) լիրա, և մգկիթներու վերաշինութեան համար 64 լիրա: Պերճախօ՞թ ու անշաններ:

ԿԼԱՏՍԹՈՆ նորէն նամակ մ'է գրած Հայկական Խնդրոյն վրայ, յորում կ'աւել. «Ոչ ոք Սուլթանի և իւր գործիչներուն դէմ կը գործածէ կէսն այն ուժգնութեան որով պէտք էր խօսիլ: Անոնց մեղքը ամեն սահման անցած է, և անոր նկարագրութիւնն ալ պարտէր անցնիլ ամեն սահման: Իմ ընտրութիւնս է կամ ուժգնորէն դատապարտել ամեն ոք կամ կռուութեալ լռութիւն պահել, որովհետեւ իմ լեզուն վերացականօրէն կրնար ընծայուիլ բարկութեան, թէպէտ լինէր բոլորովին պաշարիւն: Ես լուր կը մնամ միայն որպէս զի փնտռ չհասցնեմ: Եւրոպեան միտքը ընդունելի չքմեղանք կը փնտռէ իւր խայտառակութիւնը պատրուակելու: Ես չեմ ուզեր հայթայթել այդ պատրուակը»:

ՈՐ. ՆԷՓԻ ՅՄՆՑԱՆՔԸ: Կ. Պոլսէն կը գրեն թէ Յունիս 9ին Դուռն ամերիկեան դեսպանատան հաղորդեր է տեղեկագիրը զոր Բաղէշի կառավարչէն ընդունած են նկատմամբ Պատ. Նէփի: Ըստ այսմ՝ Նէփի յանցանքներն են, ի միջի այլոց:

Եկեղեցւոյ զանգակը զարնելով նշան տուած լինիլ Հայոց յարձակմանը ընդդէմ Թրքաց:

Սպաննած լինիլ Հայ մը, կամ վճարած լինիլ զոմի որպէս զի սպաննէ:

Օգնած լինիլ Թուրք աղջկան մը առեւանգմանը:

Առաջնորդ և կազմակերպիչն եղած լինիլ յեղափոխական կուսակցութեան մը և ի յարաբերութեան գտնուած լինիլ Սասնոյ դէպքերուն մէջ քաջածանօթ Համբարձումի հետ, ևն:

Միացեալ Նահանգաց Հանրապետական կուսակցութեան Ազգային Համաժողով

դավին մէջ քաղաքական ծրագիր մ'ընդունուեցաւ որ կը պարունակէ, ի միջի այլոց, հետեւեալ յայտարարութիւնը.

«Հայաստանի կոտորածները Ամերիկայի ժողովրդեան խորին համակրութիւնն ու արդար զայրոյթը յարուցած են, և կը հաւատանք թէ Միացեալ Նահանգք պարտաւոր է գործածել ըստ սլառչաճի իւր բոլոր ազդեցութիւն վերջ սալու համար այս խժդժութեանց: Ի Թուրքիա Ամերիկայի բնակեալք ամենածանր վտանգներու նշաւակ եղած են և ամերիկեան ըստացուածք չիք դարձած են: Հոն և ամեն տեղ ամերիկեան քաղաքացիք և ստացուածք պէտք է բացարձակապէս պահպանուին յինչ և իցէ գին:»

Կ. Պոլսէն կը գրեն Ն. Ե. Թրիպիւնի.

Ոչ մի հայ քաղաքի մէջ կենաց կամ ստացուածքի ամենաթեթեւ ապահովութիւն ունի: Ցերեկուան կամ գիշերի ո և իցէ ժամուան կրնան իւր սուռն խուզարկել, իւր ինչք գրաւել, իւր գրեան և թուղթեր ջնջել, և զինքն ալ բանտ նետել: Այս տեսարաններ օր ըստ օրէ հարիւրաւոր անգամ կը կրկնուին եւրոպական զեսպանաց աչքին առջեւ: Թիպէրիոս կամ Ներսիս երբէք լրտեսութեան և յարքունիս գրաւելու դրութիւնը չհասուցին աւելի մեծ կատարելութեան քան զօր օսմ. պետութեան ներկայ վարչութիւնն արած է: ... Կառավարութիւնը արտաւերջ զէնք կը յղէ ներքին գաւառներն, թուրք պահապան զօրքերուն, և ծայրագոյն խնամով հսկողութիւն ի գործ կը դնէ իսկէնտէրունէն վար ծովեզերքը սրպէս զի Կիպրոսէն ռազմամթերք չներածեն Հայերը:

Պէրլին, Յունիս 14. Մակեդոնական Յանձնաժողովն որ ի Սոփիա կը նստի, որոշած է պահանջել Մակեդոնիոյ ինքնօրինութիւնը, և կը դաւադրէ յարոյթ մը յառաջ բերելու: Վասն որոյ հաս կը կարծեն թէ Աւստրիա խնդրած է Սուլթանէն որ հաւանի Մակեդոնիոյ ղինուորական գրաւմանը Աւստրիոյ կողմէն եթէ յարոյթը անգլի ունենայ անդ:

Այս կարծիքին հետ կրնայ յիշուիլ թէ Պրն. տը Բալէ, Աւստրիոյ երմտական Նախարար, ուրբաթ օրը ի խօսելն աւստրիական երմտացոյցին վրայ Տայխսթաթում, յայտարարեց թէ Աւստրիա-Հունգարիա

Պալքանեան Տէրութիւն մ'էր եղած յորմէ հետէ ստացած էր զՊոսնիա, և ուստի իրաւունք ունէր պալքանեան թերակղզոյն գործոց միջամտելու: Ակնարկութիւն մ'ալ արաւ նախարարն թէ Բէդէրպուրկի մէջ ծրագիր մը քննուած էր վերաբերութեամբ պալքանեան պետութեանց վաշնակցութեան մը վերածմանը ընդ ուսական թեւարկութեամբ:

Ռուսիա սնդած է որ Պուլկարական կառավարութիւնը դադրեցնէ անպատճառ զինեալ խմբերու անցքն սահմանագլխէն ի Մակեդոնիա, ինչպէս նաև խնդրած է յունական կառավարութեանն արգելել Յունաստանէն ի Կրետէ զէնքի և մարտկի յղումներն:

Սրգէն ծանուցած ենք Հայկական Խնդրոյն վրայ ռուսերէն լեզուաւ եղած այն մեծահասոր հրատարակութիւնը որ հաւաքածոյն է Կլասսիքնի Չէսթրեան ճառին, Ռօլէն Ժագմէնի, Մաք. Բօլի, Կրկնի և Տիլօնի երկասիրութեանց: ՄՇԱԿէն կը տեղեկանանք թէ այդ գործի առաջին տպագրութիւնն սպառած և երկրորդն ի Մոսկուա ի լոյս ելած է. պարունակելով իզմիրլեան Պատրիարք Հօր և Տիլօնի պատկերներն: «Նոր հրատարակութեան մէջ, կ'առնէ Մշակ, աչքի է ընկնում Գ. Դ. ի մի նոր և գեղեցիկ յառաջաբանը, որ խիստ յարձակումներ է պարունակում ռուս խաւարամիտ Լրագիրներէրի դէմ:»

Մարաշի բողոքական Հայոց Հովիւն տասն տարուան տաժանակիր բանտարկութեան դատապարտուած է վասն զի Հայկական Խնդրոյն վրայ Լորտ Սօլզպէրիի ճառը հայերէնի թարգմաններ է: Տէյլի Նիւզ այս Լրոյն նկատմամբ դիտողութիւն կ'անէ թէ թուրք «Իշխանութիւնք եթէ զուարթամիտ լինէին՝ կրնային ներել Հովիւին այն սլայմանաւ որ նա թարգմանէր Լ. Սօլզպէրիի մէկ ուրիշ ատենախօսութիւնն ալ, օրինակի համար՝ զՊրէտֆօրտին, կամ անցեալ աւուր խօսածնյորում Լ. Սօլզպէրի բացատրեց թէ ինքը իրաւ չէր ասեր երբ կը սպառնայր:»

Կ. Պոլսէն լուր եկաւ ծանուցանող թէ Տիկին Լ. Օ. Լի, Մարաշի միսիօնարուհին, իւր զաւակներով հանդերձ հասած է ի մայրաքաղաքն: Տիկինը կարգադրութիւն

արած էր կոտորեալ ծնողաց 45 որբ զաւակներու դաստիարակութեան և բնակարանի համար, բայց թուրք պաշտօնեայք ի Մարաշ մերժեց են թողուլ այդ տղոց մեկնիլ իրենց բարերարութեան հետ, առարկելով թէ իրենք (թուրքերը) հոգ պիտի տանին անոնց: Պաշտօնեայք թող չի տուին Տիկին Լիի իւր հետ առնուլ իւրեան իսկ երեք զաւակները, ասելով թէ անոնք թրքական հպատակ էին՝ ի թուրքիս ծնած գոլով, և այս՝ ի հեճուկս այն իրողութեան թէ Տիար և Տիկին Լի երկուքն ալ բուն Ամերիկացի են: Լիանք մեծ գոռարութիւն կրեցին իրենց զաւակները Մարաշէն հանելու, և հաւանական է չյաջողէին եթէ Տիար Րիտու, Ամերիկայի ներկայացուցիչ ի Կ. Պոլիս, կորսի կերպով միջամտած չլինէր:

Հեռագիր մը կը ծանուցանէ թէ Օրիորդ Շաթըք, ամերիկացի միսիօնարուհին, Ուրֆայի հայ որբերէն սմանք արտասահման յղել ուզեր է, բայց կառավարութեան պաշտօնեայք թող տուած չեն:

Մշակ գէտեւեալն կ'արտատպէ Արարատէն. «Վերջին ժամանակներս եւրօպական թերթերից սմանք մի անհեթեթ լուր հրատարակեցին, որ իբր թէ ամենապատիւ պատրիարքը ձգտում է միաբանութիւն հաստատել Հռովմի պապի հետ: պարտք ենք համարում հերքել այդ լուրը որպէս անտեղեակ մարդկանց մտքի ծնունդ: Այդպիսի միաբանութիւն հաստատելը Հայաստանեայց եկեղեցու կանոններով վեր է որ և է հոգեւոր պետի իրաւասութիւնից և սրբազան Իգմիւրլեանն այն անձն չէ, որ այդպիսի ձեռնարկութիւններ սկսէ: Հայրապետական Դիւանը, որ անընդհատ յարարերութիւն սենի Կ. Պոլիս պատրիարքարանի հետ, ոչ մի այդպիսի տեղեկութիւն չէ ստացել:»

Նիւ ձէրզլիի Մարիթաուն քաղաքին մէջ մեծ ժողով մ'է եղեր Հայոց համար և Պատ. Միւլ նշանաւոր երէցն խօսեր է արտասովոր խանդով: Հանգանակութենէն դոյացած է իբր 1,000 տղարի դուամար մը:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ

Յեղափոխականութիւնը այլ ևս այս րնկերութեան կամայն խմբագրական խմբի հանգամանքը չէ: Բառին խոր իմաստովը այժմ ամեն Հայ, քիչ բացառութեամբ, յեղափոխական է շնորհիւ Վեհ. Սուլթանին և իւր դժոխական դաւաճիցներուն, որք լաւ համոզեցին, մանաւանդ վերջին կոտորածներով, թէ թուրք իշխանութեան ներքեւ Հայոց անհնար է, մինչեւ իսկ վտանգաւոր է յառաջդիմել, լուսաւորիլ, կրթել զաւակները, ազդեցիկ, յաջող կամ խելացի լինիլ: Եթէ թուրք կառավարութիւնը իւր մահմետական հպատակներուն արտօնութիւն տուած լինէր կողոպտելու զՀայերն, միայն կողոպտելու, կտրելի պիտի համարէինք թէ օր մը անցուկը մոռցուկ լինէր: Բայց հրահանգեալ ամբոխին հարուածներն ուղղուեցան մարդկային իրաւանց քան զամենայն սրբազնագոյններուն— կեանքի, պատուոյ, կրօնի և խղճի: Կառավարիչները սուտ երգմամբ հաւտացուցին Հայ երեւելեաց թէ Հայոց մէկ մազին Պատ չպիտի լինէր եթէ զէնքերը յանձնէին կառավարութեան, և ապա զինագուրի Հայ ազգորենակութեան վրայ յղեցին խաթաւածը, յաճախ աջակից տալով նմա և կանոնաւոր գօրքը: Հայհոյեցին, կողոպտեցին, այրեցին, սրբավայրեր պղծեցին, կիներ և մահտաղ օրիորդներ առեւանգեցին և անասելի նախատանայ ենթարկեցին զայնս: Վեց կամ եօթն բիւր Հայեր, մեծ մասամբ երիտասարդ կամ այր կատարեալ, չարաչար սպաննեցին, զսմանս նախատական անդամատուութեամբ, զայլոց ոսկորները փշրելով կամ գլուխները ճմլելով սոսկալի դաժանութեամբ: Ի լուր այս արհաւրաց մարդկութիւնը զարհուրեցաւ, և Ամենակալն իսկ կարծես աղչեցաւ:

Այս ամենը կատարուեցան կեղբոնական կառավարութեան ծրագրին և հրահանգաց համաձայն: Հրահանգներն հեռագրաւ հաղորդուեցան որպէս զի ջարդերը մեծ մասամբ կատարուէին ամեն տեղ միանգամայն կամ հուպ ընդ հուպ, որպէս զի հարուածեալ քաղաքէ մը լուր չերթար սպաննացեալ քաղաքներուն ի ըզ-

գուշութիւն: Այս ինչ մեծ գաւառական կեդրոնին մէջ պաշտօնեայք օր ըստ օրէ լուր կը ստանան հեռագրաւ և իրարու աւետիս կուտան— երէկ Ք. քաղաքը զարկեր են— այսօր Բ. ի բանը լինցուցեր են...: Ջարդէն առաջ ամեն քաղաքի հայ երեւելեաց ցանկը պատրաստած և խառնիճաղանճի առաջնորդներուն յանձնած են պատուիրելով որ մասնաւոր հոգ տանին գտնել և սպաննելու ազգին գըլխաւորներն: Եւ գլխաւորներէն որոնք որ ի փախուստ կամ ի թաղուստ փութալով պրծեցան, իբրեւ կայսերական հրամանի գործադրութենէն խոյս տուող յանցաւորներ՝ բանտ նետուած կը տառապին այժմ:

Ոչ մի ժողովրդի պատահած է երբէք նախատինք այսքան զարհուրելի, այսքան ահաւոր:

Ամեն Հայու հոգին ու մարմինը կը սարսռայ յանուն յաւիտենական Արդարութեան սրբելու այս նախատինքը:

Բայց ի՞նչպէ՞ս և ե՞րբ:

Ահա խնդիրը:

Ոմանք առաջնորդք կը պնտան հրապարակաւ— պէտք է զարնենք, յեղափոխենք, կռուինք:

Եւ այսպէս բաց բերան աղաղակոյններն իրենք զիրենք կը համարին ճշմարիտ յեղափոխական:

Ո՞վ է ճշմարիտ յեղափոխականը: «Զարկէք» աղաղակող և ջախջախուած ժողովուրդը զրգռել աշխատողը չէ՝ ճշմարիտ յեղափոխական: Ժողովուրդը յորդորի, զրգռի բնաւ պէտք չունի, նա պէտք ունի ինքնապաշտպանութեան ջոշափելի միջոցներու, և ո՞վ որ լռիկ մնչիկ, առանց թերթին միջոցաւ փօզ հնչելու և թշնամին իւրայնոց վրայ հրաւիրելու, կը հնարի դանակ, թուր, հրացան, վառօդ խթել խեղճ Հայոց ձեռքը, նա է յեղափոխական ճշմարիտ և հայրենասէր:

Իսկ անոնք որ իրենց ոյժը պստալու և սխալարժութեան կուտան և տղայօրէն կը կարծեն թէ՛ պոռալով կը սկսի բուն գործը, չարաչար կը մեղանչին, և ի գէտս կամ յանգէտս կը դաւաճանեն ազգին դէմ: Խլրտում այս ինչ տեղ, յարոյթ այն ինչ կողմ, չե՛ւ ինքնապաշտպանութեան անհրաժեշտ միջոցները տուած, չե՛ւ ժողովուրդը նիւթապէս կաղաւերած, կը լինի ապուշ անձնապանութեան գործ:

Մեր ազգային քաղաքականութիւնը պէտք է չըլի լսկ մեր գգացումներէն, որքան և սուրբ լինի մեր զայրոյթը այս միջոցիս. մեր ուղղութիւնը պէտք է եղանակաւորի Եւրոպոյ միջազգային կացութեան համեմատ, վասն զի մեզ նման փոքր ժողովուրդ մը չի գօրեր իւր ետեւէն քաշել տանիլ բռնութեամբ ահագին Եւրոպան: Եւրոպա մեզ չպիտի հետեւի, մենք պիտի հետեւինք Եւրոպայի, այսինքն պիտի ներդաշնակենք մեր ընթացքը եւրփականին հետ:

Դիտեցէք թէ ինչ կ'ասեն Տէրութիւնք առ Կրետէ. «Տեղդ վար նստէ:» Ինչ կ'ասեն Մակեդոնիոյ. «Հանդարտ կեցիր:» Ինչ կ'ասեն Դրանը. «Զուպէ Կրետէի ապստամբութիւնը:» Ինչ կ'ասեն Յունաստանի. «Մի՛ քաջալերեր Կրետէի յարոյթը:»

Այս ամենը կը ցուցնեն թէ Տէրութիւնք չեն ուզեր այժմ այդ խնդիրներն լուծելու ձեռնարկել: Եւ խոստովանինք թէ դժկամակ տէրութիւնն մանաւանդ Ռուսիա է, և այս միջոցիս միջազգային համախառնութիւններն այնպէս են որ Ռուսիոյ հակառակելով արեւելեան խնդիրն ձեռք առնելու ոչ մի տէրութիւն յօժար է:

Ռուսիա՞ ինչու կ'ուզէ որ սպասէ Եւրոպա, սպասեն Հայք, Մակեդոնացիք, Յոյնք ևն: Պատճառն այն է որ Ռուսիա երկաթուղիներ ունի շինել աւարտելու, նաեւ կ'ուզէ որ Թուրքիոյ այս ինչ գաւառներուն մէջ անբաղձալի հայ տարրը մաքրուի, և ապարէզը պատրաստուի ռուսական գրաւման և գաղթականութեան համար: Ռուսիոյ քաղաքականութիւնը չէ իւր հպատակ ցեղերն ինքնօրէն նահանգներու վերածել ռուս գերիշխանութեան ներքոյ, որպէս ժամանակաւ աւրին հին Պարսից միապետները, յաջորդք Կիւրոսի, և ինչպէս արին նաեւ Հռովմէացիք չափով մը: Ռուսիոյ քաղաքականութիւնը նախակիրօսեան դարերու, հին Ասորեստանցւոյ բարբարոս քաղաքականութիւնն է, զոր իրագործել կ'ուզեն Լօպանօֆներ թէ և լինի Թուրքիոյ հպատակաց գերութիւնը, չարչարանքը երկարաձգելով, կամ թէ թուրքահայ ամբողջ ժողովուրդը կատարելով: Աւա՛ղ, աւա՛ղ... չեմ ասեր Հայոց, որք դժբաղդ են բայց անմեղ, և դժբաղդ են շնորհիւ իրենց յառաջդիմութեան սիւրոյն— այլ կ'պոսեմ ա-

ւա՛ղ աշխարհի, ամօ՛թ մեծ Տէրութիւններուն, ամօ՛թ այն անսիրտ և անողորմ վարիչներուն մեծ տէրութեանց որք իրենց յետադիմական և խաւարամիտ քաղաքականութիւնը յառաջ տանելու համար տրկար ազգաց անէծքը և Աստուծոյ բարկութիւնը կը հրաւիրեն իրենց վրայ:

Ո՛վ Աստուած հարց իմոց, Լուսաւորչի, Ներսէսի և Մեսրոպայ, անիծէ չարախոհներն, և քու արդարութեանդ շանթերը թափէ այն անգութ իշխաններուն վրայ որք յանուն քո թագաւոր եղած կը կարծեն ի չարագործել, ի սպաննել և ի հալածել:

Եւ այժմ ձեզի կը դառնամ նորէն, սիրելի՛ հայրենակիցներ, և կ'ասեմ «հանդարտ կեցէք»: Կը խնդրեմ որ հաշուառնէք մեր թշնամիներու բազմութիւնը որ թրքաց բարբարոս խուժանին ետեւ պահուած կը գործեն. բոլոր մեծ պետութիւնները մեր թշնամիներն են, մեզ իրենց շահերուն գործիք արին:

Հայերն պէտք է հիմա պատրաստուին իրենք զիրենք պաշտպանելու թրքաց դէմ երբ սոքա նորէն ջարդի փորձ փորձեն: Ես չեմ յորդորեր Հայերը որ յարձակին թրքաց վրայ վրիժառութեան համար, այլ միայն պատրաստ գտնուին ետ մղել թրքաց յարձակումներն ծայրագոյն յանդգնութեամբ, անխնայ ջարդ տալով Աստուծոյ այդ անիծեալներուն երբ նորէն ժպրհին յարձակիլ իրենց վրայ:

ԺԻՒԼ ՍԻՄՈՆ

Ժիւլ Սիմոն, որոյ մահն ողբացին անցեալ օր Ֆռանսացիք, Հայոցս ուշադրութեան ևս արժանի կեանք մ'ապրեցաւ: Իմաստասիրութեան ուսուցիչ էր նա և մտտենադիր, բայց քաղաքական գործերու ալ միջամուխ եղաւ բաւական տարիներ: Երեսփոխան, ապա ժերակուտական եղաւ ցկեանս և միանգամ ալ նախարարապետ:

Ժիւլ Սիմոնի կենաց կարեւորագոյն դերն եղաւ թերեւս իւր պատգամաւոր յղումն ի Պոռտոյ, 1871ին, երբ Բարիզ անձնատուր եղած էր Գերմանիոյ և հաշտութեան դաշնագրին պէտք է ընդունուէր կամ մերժուէր Ֆռանսացոց կողմէ:

Կամպէդգա, մեծ հայրենասէրն, գրեթէ դիզդադօր այն պահուն, որ կը յայտարարէր թէ «ոչ մի մաս Ֆռանսական հող և ոչ մի քար Ֆռանսական ամրոցներէն կուտանք Գերմանիոյ» և պատերազմը ցվերջին չունչ շարունակել կ'ուզէր, իւր դէմ դառաւ զԺիւլ Սիմոն, որ յարատեւ, զգօն և իմաստուն դիմադրութեամբ յաղթեց Կամպէդգայի «վսեմ յիմարութեանը», ստիպեց զնա քաջաւիլ յառանձնական կեանք, և փրկեց զարդէն պարտեալն Ֆռանսա բոլորական և մահացու ջախջախումէ որ անխուսափելի հետեանքը պիտի լինէր եթէ հայրենասիրական մոլեգնութեամբ վերսկսէր յաղթական և անդիմադրելի Գերմանիոյ դէմ մարտնչիլ: Յիշել պէտք է թէ այդ թուականէն իրր հինգ տարի վերջ, 1875ին, Գերմանիա ուղեց վերջնականօրէն ճմլել զՖռանսա նոր պատերազմով մը, բայց Չարն թող չտուաւ, և պատերազմի դեռ անպատրաստն Ֆռանսա ցայտօր երախտապարտ կը զգայ ինքզինք Ռուսիոյ այդ ազդու միջամտութեան:

Կը հարցնէք թէ Ֆռանսա նոյնքան երախտապարտ զգա՞ց ինքզինք իւր փրկարար և իմաստուն զաւակին Ժիւլ Սիմոնի ևս: Ո՛չ: Ժիւլ Սիմոն իւր լոյնասուն հայեացքով և միջակայ ուղղութեամբ դժպիսի եղած էր Ֆռանսական ամեն կուսակցութեան: Այն կուսակցութիւնն անգամ որ իւր շնորհիւ յաղթանակեց, չուզեց զնա ունենալ ի գլուխ իւր:

Կամպէդգա որ հրաշագան աւելնով կազմած էր Ֆռանսական դիմադրութիւնը մեծ ճգնաժամուն մէջ, կը զգար հաշտութեան գերմանական պայմաններուն չափազանց նուաստացուցիչ և դժոխմբեր հանգամանքը, և հայրենասիրական ցաւով զրեթէ խելայեղած կը գոռար թէ հարկ էր շարունակել մարտնչիլ. նա մեծ էր հայրենասիրութեամբ. բայց Ժիւլ Սիմոն էր, ուրիշ մտքով մը, աւելի մեծ հայրենասէր, զի կարող եղաւ բանականութեան յայտնի պահանջներուն հպատակեցնել իւր և ազգին հայրենասիրական մոլեգնութիւնը:

Ազգային ճգնաժամերու մէջ պէտք են Կամպէդգայի նման «խենթ»եր, ինչպէս և Ժիւլ Սիմոնի պէս փիլիսոփաներ: Երկուքն ալ իրենց կարգին կը կատարեն փրկաւէտ դեր:

ԿՐԵՏԷԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Կրեաէի բնակչաց 270,000ը Յոյն են, և 70,000ը յունազգի մահմետական, այսինքն ժամանակին քրիստոնէութիւնն ուրանալով մահմետական եղած Յոյներու սերունդ մեծ մասամբ: Սոքա ջերմեռանդ են իրենց միւսիւրման հաւատքին մէջ, թէ և հազիւ գիտեն թրքերէն, և սաստիկ կ'ատեն իրենց քրիստոնէայ ցեղակիցները: Հարկաւ Յոյներն ալ այս ուրացելոց զաւակներուն նկատմամբ դառն ատելութիւն կը տածեն:

Քրիստոնէայ Յոյները փոքր ի շատէ յառաջդիմական կրթութիւն կը ստանան և շահաւոր գործերու մէջ կամաց կամաց կը գրաւեն մահմետական Յոյներու դիրքերը: Այս ալ անշուշտ ախմար դժգոհութեան առիթ կը լինի թրքացածներուն:

1867ին, Տէրութեանց պնդելուն վրայ, Կրեաէի շնորհուեցաւ անուանական ինքնօրինութիւն, և 11 տարի յետոյ Հալէփեան կոչուած դաշն կոեցաւ, ըստ յանձնարարութեան Պէզինի վեհաժողովոյն, որով ինքնօրինութիւնը ըստ բաւականին իրական դարձաւ: Երեսփոխանական ժողով ունէին՝ քրիստոնէայ և միւսիւրման անդամներու որոշուած համեմատութեամբ: Ընդհանուր կառավարչին պաշտօնավարութիւնը հնգամեայ պիտի լինէր, անօթի փաշաներու արագ յաջորդութեան կղզին փրկելու համար: Նաև ամեն կառավարիչ պիտի ունենար երկրորդ մը հակառակորդ դաւանութենէն և անոր չահերն հոգալու համար: Այս դրութիւնը ասպարէզ բացաւ քաղաքական կուսակցութիւններու անդու և չարաչար մրցումներուն: 1888ին նոր յարոյթ մը տեղի ունեցաւ, և Սուլթան Համիտ յղեց զՇաքիր փաշա 20,000 զօրօք, որ պաշտօնական վիճակ հռչակեց և ետ առաւ Հալէփեան դաշին մենաշնորհներուն մեծագոյն մասը: Այն ատենէն ի վեր դժգոհութիւնը կը շարունակէր, որ այժմ ապստամբական կարեւոր շարժման մը երևոյթ առած է: Հիմա ալ 20,000 զօրք յղուած են: Յայտնի է թէ ելքն ինչ պիտի լինի:

Մեզի համար կարեւոր է նկատել թէ ինչ նսղկալի բան է քրիստոնէութենէ

դարձած միւսիւրմաններու դրացիութիւնը: Ահա Կրեաէի Յոյներն իրենց կողին խոթուած կը կրեն ուրացեալ Յոյն ազգաբնակիւթիւն մը: Արթննանք մեք Հայերս ալ, և ամեն միջոց փութով ի դործ դնենք անցեալ տարուրէն ի վեր բռնի մահմետականութիւն ընդունած Հայերն վերտաին ի փարախ մայրենի եկեղեցւոյ դարձնելու: Նոքա այժմ հոգեկան տագնապի և խղճի տանջանաց մէջ են, երբ ժամանակ անցնելով կամաց կամաց խիղճը լռէ և իրենք մահմետականութեան վարժուին, ա'լ կորսուած են: Եւ չարիքին ահաւորագոյն կողմն այն է՝ որ դոքա ոչ թէ լոկ կորսուած պիտի լինին Հայութեան համար, այլ, սոսկալի է մաածել, պիտի դառնան դառն թշնամիներ քրիստոնէայ Հայերուն:

Մաղթենք որ մեր իմաստուն Պատրիարք Հօր ջանքերն այս մասին շուտով պսակուին յաջողութեամբ:

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէմ)

Կ. Պոլիս, 14 Մայիս 1896

Պարսից Շահին զարնուիլն ցաւ ազդեց տեղւոյս Հայերուն, զի ծանօթ էր վախճանեալ Հայաստանութիւնն: Տեղւոյս ոստիկանութիւնն շատ մը Պարսիկ ձերբակալելով պարսիկ դեսպանատան յանձնեց, իբր թէ Շահին կենաց դէմ դաւող կուսակիցներու կեդրոնն Կ. Պոլիս է եղեր, և նոյն իսկ սպաննիչն ասիկայ զրկուած է: Սուլթանն խորապէս յուզուած է այս սպանման առթիւ:

Թուրք ազատական թերթերու (Միգան և Մէշվէթթ) մէջ առ հայ կուսակցական ուղղեալ միութեան կանոններն ու առաջարկներ մեծ ցաւ սպառնաւ են Սուլթանին. և նոյն իսկ նոյնտոր ջարդերու խորհուրդ յղացեր է:

Անշուշտ այս յուզումներ սաստկացուցած են իւր տկարութիւնն: Վերջերս բժիշկը ի խորհրդակցութիւն գումարեալ հաստատեր են ողնածուծի մի հիւանդութիւն և խորհուրդ տուած են հանգստութիւն ևն. սակայն Սուլթանն չուզեր թո-

ղուլ իւր գործօն կեանքն :

Ժամանակին գրեցի ձեզ թէ՝ որպէս Սուլթանն մինչ իսկ առան հազար ոսկւոյ դումար մը խոտաացած էր, Պատրիարքի հրաժարականն և կամ Պատրիարքէն մի մեղայագիր ձեռք անցնողին : Համիտ՝ տեսնելով թէ անհնար է այդ՝ մօռնալ ձեացոյց այդ խնդիր : Դրան և Պատրիարքարանի մէջ յարաբերութիւնք վերսկսան, բայց կ'երեւայ թէ որոշած է տարբեր ուղղութեամբ մը միւսնոյն նպատակին հասնիլ : Իւր նոր ծրագիրն է հրաժարցնել առաջ Բաղժողովոյ անդամներն, առանձին թողուլ Մ. Պատրիարքն և այսպէսով ստիպել զայն թողուլ իւր աթոռն : Այս ծրագրի գործողութեան հոգն յանձնուած է հայազգի աստիճանաւորի մը, որոյ տա՛մէջ ժողովներ կազմուած են Դրան հայ էֆէնտիներէ և հայ վաճառականներէ : Սոքա յետ բանակցութեան որոշեալ են հրաժարցնել առաջ միայն 3-4 կարեւոր անդամներն, զի միւսներն իբր հետեակ անոնց կը հետեան : Վերջապէս մին կ'ըստանան է այդ 4 անձանց մին համոզել, երկրորդ մը մի այլ ժողովական համոզելու հոգն կատանան : այսպէսով աշխատութիւնն կը բաժնուի, գործի կը սկսին ... սակայն և ոչ մին կը յաջողի : Այժմ նորանոր ծրագիրներ կը պատրաստուին, այլ ի զուր, մեր Բաղժողովոյ անդամք գիւրութեամբ թակարդի մէջ խնդներ չեն :

Պատրիարքարան պատրաստել կուտայ կոտորածոց, բռնի խլամուծիւն ընդունողաց, աւարաւութեանց, վանօրէից և եկեղեցեաց ու բնակարանաց աւերմանց են : Եւ մասին մի տեղեկագիր, ըստ որում 100,000ն կ'անցնի կատրեալ Հայերութիւն : Պատրիարքարան միմիայն առաջնորդաց, բողոքական ու կաթոլիկ բարոյիչներու և ականատես վկաներու գրութեանց վրայ կը հիմնէ իւր տեղեկագիրն :

Վերջերս Պատրիարք Հայրն ստիպուեցաւ կուսակցականաց դէմ մի կոնգակ կարգալ տալ յեկեղեցիս :

Գաւառներէն առաջնորդ կը պահանջուի, տեղւոյս կրօնականներ գոտարութեամբ յանձն կ'առնուն երթալ ի դաւառս, մեր կրօնականութիւնն փճացած է, հազար ամօթ մեզ :

Հայր Խարախանեանի Բերայի եկեղեցւոյ քարոզչութենէն հրաժարուիլն պա-

հանջուեցաւ զստիկանութեան դռնէն : գործադրուեցաւ հրամանն և զրկուեցաւ ի կէտիկ Փաշայ :

Կ. Պոլիս, 25 Մայիս 1896

Ամսոյս 15ին Անգ. դեսպանն պատրիարքարան գալով մէկ ժամու տեսակցութիւն մ'ունեցաւ Սրբազան Պատրիարք Հօր հետ : Ի միջի այլոց խօսած են, բռնութեամբ խլամուծիւն ընդունող Հայերու և Զէյթունի խնդրոց մասին : նպատակներու բաշխման նկատմամբ՝ կառավարութեան յարուցած դժուարութեանց մասին ալ բանակցած են :

Յաջորդ օրն բոլոր դեսպանք յորս և Պեճիգայի և Սպանիոյ դեսպաններն պաշտօն երթալով՝ Թուրքիոյ քրիստոնէից վիճակին բարեփոխման պէտքն յայտնեալու առ այս նորին վեհափառութեան ուղարկութիւնն հրաւիրեալ են : Սուլթանն ըստ իւր սովորութեան զայնս լսօչկելով զըրկեր է : Քանի մ'օրեր վերջ Ֆառնսայի և Սնգլիոյ դեսպաններն երեք ամսուան արձակուրդով մեկնեցան քաղաքէս : Հայ ըրջանաչներու մէջ մեծ կարեւորութիւն կը տրուի սոցա երթին և կը կարծուի թէ՝ բանակցութիւնք տեղի պիտի ունենան Հայոցս մասին՝ Փարիզի և Լոնտոնի դաշլիճներու միջեւ, և իրաց անատնելի վիճակին բարելաւութեան պիտի աշխատուի :

Կ'ըսուի թէ Ս. Պապն գրած է կաթոլիկ կառավարութեանց, Հայոց վիճակի բարելաւութեան ջերմօրէն աշխատիլ :

Վերջերս Սուլթանն ընդհանուր բան տարկելոց ցուցակն ուղած էր, կարծուեցաւ պահ մը թէ դուցէ Պայրամի առթիւ ընդհանուր ներողութիւն շնորհէ քաղաքական բանտարկելոց : յոյսերն չպսակուեցան :

Ամիս մ'առաջ Շաշեան Պետրոս էֆ. Զէյթունի կառավարիչ առաջարկուեցաւ նախարարաց ժողովոյ կողմանէ առ Սուլթանն : նախ դժեց, այս օրերս կրկին այդ խնդրոյ մասին կը խօսուի : հաւանական է որ՝ եթէ Սուլթանն չյաջողի իւր որոշած Թուրքն մտցնել ի Զէյթուն, պիտի ընդունի Շաշեանի անուանումն :

Վա՛ն քաղաքն ապաստանող Հայերէ մի մասն իրենց գիւղերը վերադարձման

ստոնն Համիրայէ հեծեալգորաց հանդիպելով անոնցմէ ջարդուեր են. այս լուրն քաղաք հասնելուն՝ մեկնելու տրամադիր Հայերն չեն ուզած այլ ևս քաղաքէն հեռանալ: Վանայ Հայոց վիճակն օր քան զօր կը դառնանայ:

Կառավարութիւնն կը շարունակէ դժուարութիւն յարուցանել նպաստից բաշխման գործին մէջ:

Կ'երեւի թէ Դուռն Պատրիարք Հօր հրաժարականն ձեռք ձգելու խորհուրդէն դեռ չէ հրաժարած. մէկ կողմէն հաշտցոյց կուտայ Պատրիարքարանի հետ, սակայն ներքնաբար կը ջանայ Պատրիարքն յուսահատեցնել և իւր աթոռն թողլու ստիպել. առասիկ առ այս իւր վերջին երկու մեքենայութիւններն: Ֆիլիպէի մէջ հրատարակուող Ղայրէթ թուրք թերթն Մարտ 9 թուականաւ առ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքն ուղղեալ մի նամակ կը հրատարակէ, այդ նամակն՝ իւր թէ գրուած է Պաթմաիէսոս բնակող 250 Հայերու քոմիթէյի կողմանէ, որով մաճաբնակ հայրենադէմներն՝ կը յանդիմանեն Հայոց Պատրիարքն՝ իւր Սուլթանին դէմ բռնած ընթացքի մասին, և Հայոց կոտորածոց ու տրեան միակ պատառնանաւոր կը համարին զայն, և նոյն իսկ կարգ մը անվայել խօսքեր կը տեղան մեր Հայրենանուէր Պատրիարքին: Պաթմաիէսոսի մէջ այդ ըզգացումներն կրող Հայերու և մանաւանդ այդպիսի մի քոմիթէյի չդուլութիւնն կառկածի տակ չէր, կը մնար գտնալ հեղինակն: Քննութիւնք հաստատեցին թէ այդ նամակի խմբագիրն հանրածանօթ Լեւոն Սիւլեւան վատ հայազգին է: Միւսնոյն վատի գործն կը համարուի վերջերս Մանգուսի Էֆքեարի մէջ հրատարակեալ Կիլիկիոյ ինքնակոչ Յով. կաթ. առ Իղմիրլեան Սրբազան ուղղած յանդիմանադրոյն:

Հակառակ Դրան ի գործ դրած միջոցներուն Իղմիրլեան Սրբազան օր քան զօր ժողովրդականութիւն կը վառտի ի Հայս և կը սիրուի եւրոպացիներէն և ազատական թուրքերէն:

Վերջերս կրկին շատ մը ազատական թուրք երիտասարդներ ձերբակալուեցան:

Բանի մօրեր առաջ Սեւ Ծովէն Մարսիլիա դնացող նաւ մը անցաւ տեղէն, որ կը պարունակէր շուրջ 50 գաղթող Հայեր: Կառավարութիւնն պահանջեց որ իրեն յանձնուին այդ Հայերն զի միայն Կ.

Պոլիս գալու համար անցագիր ընդունած էին: Նաւապետն մերժեց: Եթէ դժուարութիւնք չգտնուին գաւառացի Հայոց մեծ մասն տրամադիր են գաղթելու: Պոլիս գալու արտօնութիւնն իսկ կը զլացուի անոնց:

Ամսոյս 21ին Ազգային Հիւանդանոցի Համարաձման տօնի հանդէսն խիստ պարզ կերպով տեղի ունեցաւ: Հայ ժողովրդեան եւտի Գուլէ երթն արգելեալ էր:

Կ. Պոլիս, 1 Յունիս

Տեղւոյս հայ գործիչներու ներկայիս ծրագիրն է վերջ տալ հայ մասնիչներուն գոյութեան: Այս ծրագրի համաձայն ըստ պաննեցին Մայիս 22ին Սեդրակ անուն նշանաւոր մասնիչն՝ Ղալաթիոյ եկեղեցւոյ մօտերն գանակի հարուածներով. սպաննիչներն չգտնուեցան: Մայիս 28ի երեկոյեան՝ Գուլ Գարուի շուկային մէջ սպաննեցին ատրճանակի հարուածով Մարգար անուն մասնիչ ստտիկանութեան գոմիսէրն. սպաննիչներն ատրճանակ և դաշոյն ի ձեռին հազարաւորներու բազմութեան մէջէն անցան և իրենց դէմ ելնող ստտիկաններն և հեծեալ զինուորներն լեզկապատառ յախցնելով յաջողած են անհետանալ: Յաջորդ օրն միայն Գուլ Գարուի եկեղեցիէն բռնեցին անմեղ երիտասարդ մը, իւր Մարգարի սպաննիչն, գուցէ և յաջողին հարուածներու տակ՝ իրենց ուզած խոտտովանութիւնն ընել տալ նմա:

Դուռն Սրբազան Պատրիարք Հօր հրաժարականն ձեռք բերելու նպատակն լըքած չէ, այդ խնդրոյ յաջողութիւնն յանձնած է Նուրեան Էֆ. ի: Նուրեան ամենայն անձնուիրութեամբ կ'աշխատի Դրան յանձնարարութիւնն ի գլուխ հանելու համար: Նուրեան իւր գործունէութեան կեդրոն ընտրած է Բերայ, առաջի աջակից Տէր Մկրեան Հայրն, որոյ հետ կարեւոր դատած են նախ Բերայի քարոզիչ Խարախանեան Հօր հեռացումն և իւր տեղ Հմայեակ սրբազանի յաջորդումն: Յաջողեցան իրենց ծրագրի այս առաջին պահանջին, Հմայեակի նման անսկզբունք անձ մը դիւրութեամբ իրենց գործը կրնային ընել, և ըրին ալ. երրորդութիւնն կազմուեցաւ, ղեկավարն է՝ Նուրեան, գործիքն՝ Տէր Մկրեան, իսկ Հմայեակ

լով հետեակ է. գաղտնիքներն անոր չեն իսկ հաղորդեր: Տէր Մկրեան տունէ տուն պատեւով Պատրիարք Սրբազանի հրաժարման կարեւորութիւնն կը փոստաբանէ ամենայն խորումանկութեամբ: Քիչ համակիրներ կը գտնէ: Վերջերս խոհուն Դեոջ մը կը դմանէ խիստ ծանր պատասխաններ ընդունած է, բայց նա եռանդով կը շարունակէ իւր դերն:

Պարսից Շահի սպանման գործն Պապի անուն ազանդաւորաց կը վերագրեն, որոյ պետն Շէյխ Ճէմալէտարն, աստ կը գրտնոյի, սպաննիչն Կ. Պոլսէն զրկուած է: Պարսիկ կապաւարութիւնն Շէյխ Ճէմալէտարնի իրեն յանձնուիլն խնդրած է. Սուլթանը կը դրժէ:

Մատնիչներու սպանման գործին վերայ ձերբակալութիւնք վերսկսան: Բանտերուն մէջ անլուր շարչարանքներ կուտան. նոյն իսկ թուրք բանտարկեալներն բանտապետներու դրդման առկ կը դանակոծեն հայ բանտարկեալներն. սպանեալներ ալ եղած են:

Եպիսկոպոսական եկեղեցւոյ Արքեպիսկոպոսին Քաղուհւոյն մատուցած ուղերձին մասին շատ կը խօսուի աստ, իբր թէ Վիքթորիա Թագուհին անդ թուրք իւններն կարգաւով արատաւած և անմիջական դարման տանելու հրաման տուած է:

Հնչակեաններն օր քան ցօր կը կորսնցնեն իրենց ժողովրդականութիւնն, իսկ Դաշնակցականներն կը շահին. առաջիններէն շատեր երկրորդաց խումբին մէջ կը մտնեն:

Յառաջիկայ կիւրակէ Սահմանադրութեան տարեդարձն է, բայց հանդէս չպիտի կատարուի:

ԾՈՎ

ՆԱՄԱԿ ԹՈՒՐԲԻՆՅԵՆ

(Հայաստանի ներքին գաւառէ մը Յունիսի սկիզբներն գրուած է այս նամակ առ ամերիկաբնակ Հայ մը:)

Անկարելի է որ գաղթում չլինի եթէ անցագիր տան. բայց առ այժմ չեն տար: Ամեն ոք ձանձրացած է այս շուներէն. սա տոնան կարծես կը տեսնենք երբ Թուրքի կը հանդիպինք: Ամեն օր սպառնալիքներ պակաս չեն, դարկինք, պիտի դարնենք կ'ասեն: Խեղճ ժողովուրդը չուարած է:

Ճար մը արէք այս ժողովրդին: Ամօթ քրիստոնեայ աղգերուն որ այս վիճակին մէջ ձգեցին մեզ ու հեռուն կեցեր են հիմա: Եթէ նոր յարձակումներ պատահին, զէնք իսկ չունինք դիմադրելու համար: Կեցցեն Զէյթունցի քաջեր, գոնէ անոնք քիչ մը արիւն հոսեցուցին մերինն փոխարէն:

Գործ չկայ. եղածն ալ զգուելի է: Կեանքը ձանձրոյթ ու ատուապանք մ'է դարձեր մեզի: Աղքատութիւնը, ահագին պատենքի մը պէս անգաղար կը փաթթուի և կը ծրարէ մեր ամբողջ ժողովուրդը: Քայքայման ահաւոր գործը անդու կը շարունակէ, թէև անձայն: Մեծ հեղեղէ մը անգամ մը խարխլած չէնք մը նման մեր երկիրը անդադար կը փլչի:

Անձրե շատ եկաւ, հունձքերը թերեւս լաւ լինին, բայց որո՞ւ համար: Մեր երկրագործները ոչ սերմ ունին և ոչ վար ու ցանի կենդանի: Թուրք դրացիք մերիններուն արտերը կը սերմանեն ասելով թէ քանի որ դուք չէք կրնար դուրս ելնել, մենք կը վայելենք:

Բայց աշուենն առաջ, այս ամառ ինչե՞ր պիտի կրնան պատահիլ. ո՞վ գիտէ: Մենք հիմա չենք խորհր թէ ինչ եղած է, այլ թէ ինչ պիտի լինի: Արդէն նոր յալիչտակութեանց լուր կու գայ, և նշաններ կան թէ նոր ջարդեր սկսելու դիտաւորութիւն ունին թշնամիները:

Այս ամենը դուք ականջի չրով կ'իմանաք. պէտք է տեսնել հասկանալու համար թէ ինչ անհնարին խորութեան մէջ կ'ընկղմինք օրէ օր:

Մեր վիճակը ամեն կողմէ յուսահատական է, հաւատքը մեր միակ նեցուկն է հիմա, և մենք մեզ կը սրտապնդենք ասելով.---

Վախկոտ սուրբեր, ո՛հ, քաջ եղէք,
Ամպերն երկիւղ կուտան,
Բայց վախճանին սպասեցէք,
Բարիք պիտի տեղան:

Տկար աչքով ու խորհրդով
Դուք Տէրը մի՛ դատէք,
Խո՛ստ նայուածքներուն ներքե
Ժպիտ պիտի տեսնէք:

Խորհուրդն ամեն ժամ կը բացուի,
Շուտ պիտի հասուննայ.
Բողբոջն թէպէտ դառն գանուի,
Ծաղիկն անոյշ կ'ըլլայ...:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՈՒՆ

ՅԱՌԱՋԻՄՈՒԹԻՒՆԸ

Մինչև այսօր, Միացեալ Նահանգաց հազարաւոր Հայերուն մէջէն ՀԱՅՔԻ 1896 տարւոյն բաժանորդ գրուած են 134 հոգի (հարիւր երեսուն ու չորս)։ 32 հոգի ալ առաջին վեցամսեային բաժանորդ էին, որք Բ. վեցամսեային համար դեռ նորոգած չեն, ուրեմն դադարած է իրենց բաժանորդագրութեան պայմանաժամը, թէև խմբագրութիւնն այս թիւն ալ կը յղէ իրենց իրեւ յուշարար։

Այս իրողութիւնը պատիւ չի բերեր Ամերիկայի Հայոց։ Հայ մը ազգայնոց մէկ ժողովին մէջ կ'ըսէ յանդիմանութիւններ տեղացիներէ անցեալներ առեւտրի — Դուք, Հայեր, ամենէն աւելի բարձրագոյն պահանջ կ'անէք ազատութեան, ինքնօրինութեան և, սակայն եթէ Ամերիկացիք գիտնային թէ ձեր լրագրին 150 կամ 200 բաժանորդ միայն գրուած էք, ձեզի պիտի ասէին թէ դուք դեռ բանի մը արժանի չէք։

Ամերիկայի մէջ կան շատ հայ երիտասարդներ որք ՀԱՅՔԻ բաժանորդ պիտի գրուէին եթէ անոր բոլոր պարունակութիւնը իրենց կարծիքներուն կամ կուսակցութեան հաճելի լինէր։ Դոքա լրագրէ մը ոչ թէ լուրջ և անկախ և ազատ և առաջնորդող մտքեր կ'ուզեն, այլ կը պահանջեն որ լրագիրը իրենց ամեն մէկուն կուսակցական կիրքերը փայտայէ և գրգռէ։

Թղթակից մը Թուրքիոյ մէկ քաղաքէն կը գրէր անցեալ օր թէ «Հայքը ազգին խոհակա՛ւ հայրենասէրներուն բերանն է»։ Այս խօսք շատ քաջալերական է, բայց ունի տխուր կողմ մ'ալ։ Ինչպէս կը լինի որ այդ խոհական հայրենասէրներն օգնութեան չեն հասնիր իրենց յարգելի եղած լրագրին, մինչ դաշունով և գնդակով դրամ պահանջողներն հարիւրներով լիրա կը հանեն հարուստներուն ծոցէն։

Միթէ 150 կամ 200 կամ նոյն իսկ 300 բաժանորդով թերթ մը կրնա՞յ հրատարակուիլ։ Մինչև ե՞րբ անհատի մը վրայ պէտք է ծանրանայ այսքան բեռ։

Հայրենասէրներ, օգնեցէ՛ք Հայքին եթէ իրաւ կ'ասէք թէ այն ձեր յարգելի

լրագիրն է. օգնեցէ՛ք փութով և անմիջապէս որպէս զի կարող լինի հրատարակուիլ ամիսն երկու անգամ այսպիսի տարի մը մանաւանդ երբ ամենակարեւոր նիւթերու առատութեան առջեւ շուարած կը մնայ խմբագիրը։

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԱՅ Ի ԼԻՆ

Հայրենակիցներ, ձեզի պէտք է այս երկտողն ուղղեմ ծանուցանելու թէ այս տարի Մէկ բաժանորդ ազին միայն ստացած եմ լինէն։ Լինի հայ գաղթականութիւնն անցեալ տարիներուն մէջ առաջին տեղը բռնած էր ՀԱՅՔԻ բաժանորդաց ցանկին մէջ, իսկ այս տարի աղքատացի կերպով եւ մնացած է։ Ուստի մէջ կան 7 բաժանորդք. Ի Ֆիլատէլֆիա՝ 2, Ի Պոսթոն՝ 3։ Այդ քաղաքներու Հայոց ընթացքն միշտ այդպէս եղած է... բայց Լինցոյց այս ընթացքը մեկնութեան կարօտ է։

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԱՅ Ի ՊԻԼԿԱՐԻՍ

Հայրենակիցներ, ձեզի ՀԱՅՔ Եղեցի ներկայ տարւոյ առաջին վեց ամիսներն կատարելապէս՝ յուսալով թէ պիտի վերձարէք, բայց որովհետև վերջին լրէն կը տեղեկանամ թէ չէք վճարած, այժմ կը դադարեցնեմ առանց մեղադրելի լինելու։

Աւելի քան մէկ Հայ, նիւ Եորքի գաղթականներէն, դիմած են մեզ՝ դարմանուելու համար մորթային հիւանդութենէ որ բաշխիքի սրբիչներէն իրենց փոխանցած էր, որպէս կ'երեւէր գէպքին սարադաններէն։ Խրատ կուտանք մերայնոց որ երբ բաշխիք երթան, իրենց հետ տանին իրենց սանտրն, օճառն, վրձինն և մանաւանդ սրբիչներն։

ARMENIAN POEMS

(ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆՔ)

Rendered into English Verse

By

MISS ALICE STONE BLACKWELL

Մէկ օրինակի գինն է 1 տուար 25 սէնթ։
Գինը փափաքողը կրնան գիմել առ թարգմանչուհին հետեւեալ հասցէիւ—

MISS ALICE STONE BLACKWELL
3 PARK St., BOSTON, MASS.

Հասցէ

Editor of "HAIK" 260 West 21st St.,
NEW YORK,
U. S. America.

Կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգրին է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
կանխիկ

Ա. Ռ.

ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ «ՀԱՅՔԻ»

Բաժանորդագրներն կրնան յղուիլ հե-
տևեալ կերպերով:

Ամերիկեան առևտր թղթագրամ նա-
մակի ծոցով:

Ամերիկեան փոսթ-սթէմի նամակի
ծոցով:

Մընի Օրտըր:

Օտար երկիրներէն դրամ յղելու հե-
տևեալ կերպերն կան:

Մընի Օրտըր:

Բրէտի Լիօնէի փոխանակագիր:

Ֆրանսական դէմպո-բոսդ:

Դրամ պարունակող նամակներն ա-
պահովագրել պէտք է:

Կը խնդրենք յատկապէս որ յիշեն
Հայք ուղղներն թէ բաժանորդագրու-
թեան մեր պայմանն է կանխիկ վճարում:

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ
մանտա տը փոսթի միջոցաւ խաբարութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեղ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

ՈՒՍՏՈՐԻ ՀԻՆԴ ՍԷՆԹ

ԽՆՍՅԵԼՈՒ ՊԱՆԲԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին.
կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ:
Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչև
կէս օրէն վերջ 4: Շաբաթ օրերն 9էն
մինչև 1:

Հասցէն է 314 Մէյն փողոց:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

BLEEDING ARMENIA

Its History and Horrors Under the Curse of
Islam

by

Rev. A. W. Williams, of Chicago

&

Dr. M. S. Gabriel, of New York

ԱՐԻՒՆԱՅ ՀԱՅՍՏԱՆ, իւր պատմու-
թիւնն և արհաւիրք իսլամ անէծքին տակ:
Հեղինակ, Պատ. Ա. Ու. Ուիլյամս, Շիքա-
կոցի, և Մ. Ս. Գաբրիէլեան, Նիւ Եորքի:
Այս գիրքը ունի ներածութիւն մը Մ.
Ս. Գաբրիէլեանէ, և յառաջաբան մը բուն
Հեղինակէն, նաև 18 գլուխ, որոց մին,
16րդն, The Curse of Islam, է Մ. Ս. Գաբրիէ-
լեանի գրչէն:

Այս անգլիերէն գիրքը ստուար հա-
տոր մ'է 500 երեսներէ բաղկացած, կը
պարունակէ թուրքիոյ և Հայաստանի աշ-
խարհացոյցը և 32 պատկերներ:

Գինն է 1 տոլար 50 սէնթ: Պէտք է
գիմել կամ գրել առ

Rev. A. W. Williams,

1212 Chestnut St., Philadelphia, PA.

ՄԱՐԶԱՐԵՆ

ՄԱՐԶԱՐԱՆ 117 երեսէ բաղկացած
աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գա-
պարեանի գրչէն, ապալ Նիւ Եորք, Մ.
Ս. Գ. ի ապարանում, 1892ին: Առաջին մա-
սին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ
է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ու-
սուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է
կայնի, բարեւէ, քալէ, վազէ, չրջան անէ,
սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ
անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ,
գետնամած ևն. ևն.: Երկրորդ մասում
կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱ
ԳԻՏԱԿԱՆՔ»: Այս գիրքն կարգաւ և ըստ
այնմ իրենք գիրքնք մարզել պարտին
երեսասարգք: Գին 50 սէնթ:

LANTELME'S RESTAURANT,
40 Union Sq.

ՆԱԽԱՃԱՇ 40 սէնթ

ՃԱՇ 75 ,,

Բազմաթիւ ընտիր խորտիկներ գինով
հանդերձ:

ԱՐՄԵՆԻԱՆ ՄԱՍՈՒԼ

Հանդէս կիսամսեայ

25րդ տարի

Տարեկան բաժնեգրին է, օտար երկրաց համար 17 ֆրանք կամ 3 տուար 40 սէնթ: Հասցէն է—

M. M. MAMOURIAN,
Smyrne, TURQUIE

ԲԱՉՄԱՎԷՊ

Ամսօրեայ

Տարեկան բաժնետիրագրին է 10 ֆրանք, (երկու տուար) Հասցէն է—

Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE

BUSH & Co.

Պ Ո Ւ Շ Ե Ւ Ը Ն Կ.

(Հաստատուել է 1849)

65 Front St., Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին
և հափառորդնով

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՐՈՐԾ

286, 77 Էվլինիու նիւ Լորք

26րդ և 27րդ փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՆԻՒ ԵՈՐԻ

ՀԵԹ ՀԵՈՒՐ

անունն է Ուսարի Ֆրօնթ փողոցին մէջ

զանուող թիւ 14 վաճառատանն,

ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց,

ձեռնոց, շապիկ, օձիկ, փօղկապ,

ամենն ալ

ԱՄԵՆԱՍԺԱՆ ԴՆԵՐԱՎ

Հայ գաղթականութեան սկստեբուն

համապատասխանող խանութն է ասի

ինչպէս արդէն շատերն փորձով տեսած

են:

T. HENRY DEWEY,

ՓՈՐՉԱՌՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆ

Եւ իւր Օգնական

SARKIS C. KEBABIAN,

ՕՐԷՆՍԳԷՏ

Կը հոգամք քաղաքային և միջազգային դատեր: Կուտամք օրինական խրատ: Կրնայ ամեն ոք մեզ գիմել գործոյ համար կատարեալ վստահութեամբ: Հարկ է, իւր օգտին համար, որ գիմնդն առաջույ յստակ որոշէ ասելիքէ և իւր հետ միատեղ բերէ հարկաւոր թղթեր:

ՁՏիար Բէյպապեան անձնապէս տեսնելու լաւագոյն ժամանակն է ժամ 1—5 յետ միջառուր:

Պաշտօնատեղի և Հասցէ,
48 Wall St., New York, N. Y.

FACTS

ABOUT

ARMENIA

ԻՐՈՂՈՒԹԻՒՆԻ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅՍՏԱՆԻ

Այս է անունն անգլիերէն տետրակին որ Հ. Հ. Դաշնակցութեան կողմէն հրատարակուեցաւ:

Տետրակն կը պարունակէ Կլատթոնի մեծ ճառն խօսեցեալ ի Չէսթըր, և Տիլօնի յօդուածն՝ Բօնթէմփորէրի Րիվիւէն արտասպուած: Այս յօդուած մինչև ցարդ Հայոց վերայ գրուածներուն ամենագորաւորն և ամենակատարեալն է, զոր կարդացող օտարական մի, որքան ալ գուլ խղճի տէր լինի կը կապղի թուրք հառափարութեան դէմ: Հայրենակիցք պէտք է փութան ստարածել այս տետրակ օտարականաց մէջ:

Դին օրինակին է 20 սէնթ: Առ նուազն 50 օրինակ մէկէն գնողին կը արուի 15 սէնթէն:

Դիմել ՀԱՅԲԻ խմբագրատունն:

